



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ¹ 1

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՆՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների իրականացման հարցը:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտական ամբիոնային հայտերի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 22-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 1-ին նիստի օրակարգը: Նա նախ՝ շնորհավորեց գիտխորհրդի անդամներին ուսումնական նոր տարվա առիթով, ցանկացավ բարձր տրամադրություն ու գիտամանկավարժական ջանադիր աշխատանք: Պրոֆ. Ա. Ավագյանն այնուհետև խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի բազմամյա վարիչ պրոֆ. Լևոն Եզեկյանի հիշատակը:

1-ին հարցի՝ 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների իրականացման առիթով ելույթ ունեցան ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը և դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը:

Նրանք մասնավորապես նկատեցին, որ դեկանատը լիովին պատրաստ է 2016-17 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքներին. կազմված է դասատախտակը, պատրաստ է ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունը, իսկ վաղը հանդիսությամբ կդիմավորվեն առաջին կուրսեցիները:

Օրակարգի **2-րդ հարցում** հաստատվեցին հեռակա ուսուցմամբ ասպիրանտական ամբիոնային հայտերը:

Ընթացիկ հարցերում

ա/ **ԼՍԵՑԻՆ** – Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, դոցենտ Արմեն Գրիգորյանի դոկտորական ատենախոսության թեմայի մասնակի փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, Ալ. Մակարյանը և դոց. Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Արմեն Գրիգորյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ վերաձևակերպմամբ՝ «Ուսանողի ֆիզիկական դաստիարակության համակարգի ձևավորման և կազմակերպման գիտատեսական հիմքերը» /ԺԳ.00.01/ նախորդ՝ «Ուսանողի ֆիզիկական դաստիարակության համակարգի ձևավորման և կառավարման հայեցակարգային հիմքերը» թեմայի փոխարեն:

բ/ **ԼՍԵՑԻՆ** – ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի սոցիալական մանկավարժության բաժնի ընդունելության քննություններում փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, Ալ. Մակարյանը և դոց. Գ. Բաբայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ԵՊՀ-ի ռեկտորին սոցիալական մանկավարժության բաժնի ընդունելության «Օտար լեզու» առարկայի քննությունը դարձնել կամընտրական :

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին և նիստը հայտարարեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ